ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ Հայոց լեզու, գրականություն

Թեմա՝ **Միակազմ նախադասությունների կիրառությունը Եղիշե Չարենցի պոեմներում**

Կատարող Աղաջանյան Անուշ Գրիշայի

Ղեկավար՝ բ. գ. դ. պրոֆ. Գալստյան Աշոտ

ԵՐԵՎԱՆ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի այս ընտրությունը պայմանավորված է Չարենցի պոեմներում միակազմ նախադասությունների առատությամբ, որոնք օգտագործված են ոչ թե ինքնանպատակ, այլ խոսուն են, ունեն իմաստային խոր և լայն ընդգրկում:

«Միակազմ նախադասություններ» թեման անցնելիս աշակերտներին ավելի հեշտ և ընկալելի դարձնելու համար ես թերի և միակազմ նախադասությունները համեմատում եմ ընտանիքների հետ: Զեղչված ենթակայով կամ ստորոգյալով նախադասությունները զուգահեռում եմ ամուսնալուծված ընտանիքներին, որտեղ ծնողները միասին չեն ապրում, բայց անհրաժեշտության դեպքում թե՛ հայրը, թե՛ մայրը իրենց ներկայությունը կարող են ապահովել: Այսինքն, չկան, բայց կան: Միակազմ նախադասությունները նման են ծնողներից մեկին կորցրած ընտանիքի. Կորուստն անդառնալի է , անվերականգնելի, ուրեմն, ծնողներից ողջ մնացածն իր վրա պետք է վերցնի նաև չապրողի պարտականությունները, այսինքն, պիտի մեծացնի պատասխանատվությունը, անի այն, ինչ չի անում մյուսը: Այս առումով միակազմ նախադասություններում թե՛ ենթական, թե՛ ստորոգյալը, թե բառ-նախադասությունը զգույշ և տեղին պետք է օգտագործել , որ դրանց միջոցով արտահայտած գոյություն չունեցող մյուս անդամը կամ անդամները իրենց չգոյությունն արդարացված տեսնեն , ավելին՝ ընթերցողը հասկանա ավելին, քան կարտահայտեր որևէ ենթակա կամ ստորոգյալ:

Այս տեսանկյունից Չարենցի պոեմները զարմանալիորեն հարուստ նյութ են ապահովում ցանկացած գլխավոր անդամի մեջ մյուսի գործառույթը բազմաշերտ վերլուծությամբ տեսնելու համար:

Միակազմ նախադասությունների կիրառությունը Եղիշե Չարենցի պոեմներում

Դասի նպատակն է սովորողներին ընկալելի և մնայուն գիտելիք մատուցելը, որի համար որպես հետաքրքրիր և խոսուն օրինակներ կլինեն Չարենցի պոեմներից հատվածները: Որպես գիտելիքի ստուգման ձև կընտրվի խմբային աշխատանքը դարձյալ Չարենցից մեջբերումներով:

Միակազմ նախադասությունները միաբևեռ են, կազմված են մեկ մասից՝ մեկ գլխավոր անդամից: Բաժանվում են ենթատեսակների՝ անդեմ և դիմավոր՝ /անենթակա/: Դիմավոր նախադասություններն ավելի ինքնուրույն են, քան անդեմները, որովհետև մեծ է բայի՝ գործողություն վիճակի իմաստը, որի հարաբերությունն իրականությանը ավելի ընկալելի է, քան առարկայի, հատկանիշի անվան հարաբերությունը:

Ընդհանրապես միակազմ նախադասությունների ինքնուրույնությունը բացարձակ չէ, հարաբերական է՝ պայմանավորված միջավայրով, տեքստի բովանդակության, ասելիքի ձևով: Այսինքն, հող պետք է նախապատրաստված լինի միակազմ նախադասություններ ստեղծելու համար:

Ընդունված է միակազմ նախադասությունները բաժանել երկու խմբի՝ դիմավոր և անդեմ: Դիմավորներն արտահայտվում են բայի դիմավորն ձևով կամ բաղադրյալ ստորոգյալի միջոցով, իսկ անդեմները կարող են գործածվել և՛դերբայների, և՛ գոյականների, և՛ ածականների միջոցով: Ըստ այդմ՝ անդեմ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ բայական անդեմ և անվանական անդեմ նախադասություններ: Ստորև ներկայավում են համապատասխան օրինակներ:

Դիմավոր միակազմ նախադասություններ բաղադրյալ ստորոգյալով.

Ինչ էր, ինչ էր, ցնորք էր, զառանցանք, տենդ…

‹‹Խմբապետ Շավարշը››

Այնտեղ-

Էնկյուրից Էրզրում

Պայքար է՝

Հաղթանակ կամ մահ:

‹‹Ստամբոլ››

Բայական անդեմ նախադասություններ.

Ու պետք էր քայլել ու քայլել համառ՝

Ապրելու հսկա տենչը բեռ արած,

Քայլել անիմաստ մի կյանքի համար,

Մարել ու վառել աստղերը մարած… ‹‹Դանթեական առասպել››

Անվանական անդեմ նախադասություններ.

Աղջիկ:

Մարմին:

Շրթունքներ:

Հոնքեր:

Կոնքերի կոնքը կլոր: ‹‹Ռոմանս անսեր››

Աշակերտների հետ միասին փորձում ենք գտնել միակազմ նախադասությունները տրված օրինակներում և որոշել տեսակը:

Միակազմ նախադասությունները մեծ մասամբ լինում են առանձին ինքնուրույն նախադասություններ: Բայց կան նաև և՛ բարդ համադասական, և՛ բարդ ստորադասական նախադասությունների հետ գործածված միակազմ նախադասություններ:

Օրինակ՝

ա/ Փողոցում լռություն էր ու թանձր խավար,

Առավոտը մոտ էր, բայց դեռ չէր բացվում…. ‹‹Խմբապետ Շավարշը››

բ/ Ուշ իրիկուն էջ, երբ գյուղ մտանք: ‹‹Դանթեական առասպել››

Միակազմ նախադասությունների մի հատուկ տեսակ է բառ-նախադասությունը, որն արտահայտվում է մեկ բառով, որն արտահայտած նախադասության հաստատումն է կամ ժխտումը:

Օրինակ՝

- Համաձայն եք…

- Անշուշտ…

- Ուզում եք հիսուն…

-Չէ, շատ… ‹‹Ստամբոլ››

Հնարավոր չէ մեջբերումներ անել Չարենցից և չանդրադառնալ նրա կյանքին ու ճակատագրին, որովհետև նրա յուրաքանչյուր բառը կամ նախադասությունը մոտեցնում է ընթերցողին տվյալ ժամանակաշրջանին, քաղաքական, սոցիալական, հոգեբանական կարևոր դրսևորումներին՝ դրանց մեջ ընդգծելով բանաստեղծի , քաղաքացու, մարդու դիրքորոշումն ու հոգեվիճակը;

1915թ. 18-ամյա երազող երիտասարդի միտքը կապուտաչյա սիրուհու՝ հայրենիքի հետ էր, և պատահական չէ, որ այստեղ գործածված միակազմ նախադասությունները պիտի կրեին ռոմանտիզմի երազային գույներն ու բառերը, մասնավորապես.

Օ, հեռավոր, կապուտաչյա սիրուհիս…

Երազ էր կարծես՝ անապատ դառած:

Ու լուռ էր այնպես: ‹ ‹Կապուտաչյա հյրենիք››

Ցավոք, այստեղ իսկ հայրենասեր բանաստեղծի ‹‹սիրուհին›› արդեն ստանում է իրականության իրական պատկերը.

Երկիր իմ որբ, արնաքամ ու ավերակ…

‹‹Դանթեական առասպել›› պոեմում արդեն հայոց մեծ ոռբերգությունն իր աչքերով տեսած և իր մաշկի վրա զգացած այրվող հոգու իրարամերժ հարցադրում-ճիչերն են, որոնք, կարծես, պատասխան են փնտրում:

Սովորողների երևակայությունն ու ստեղծագործ միտքը զարգացնելու համար նախօրոք տրվում է հարց՝ ինչ ստորոգյալ կամ ենթակա կարող են լինել տրված միակազմ նախադասություններում / ես ունեմ իմ տարբերակները/.

Ախ, այդ դաշտերի հեռուն ոսկեգույն,

Այդ երկինքների կապույտը պայծառ…

Այս անվանական անդեմ նախադասություններում, ըստ մտքի տրամաբանության , ցավը, հիացմունքը, անզորությունը, հիասթափությունը ինչեր կարող էին անել : Իմ տարբերակը, որը ես դեռ չեմ բարձրաձայնում, սա է՝ տանում ու կտրում է իրականությունից, խոցում է , իսկ երկինքների կապույտը պայծառ թև է տալիս, բարձրացնում է, ժխտում է չնչինությունն ու չարությունը;

Կամ.

Եվ ահա կրկին մի քանի դիակ:

Եվ այստեղ ահա վարսեր կանացի:

Իսկ այստեղ արնոտ վերմակների տակ

Չորցած փշրանքներ արնաներկ հացի:

Իմ տարբերակը. Մի քանի դիակ ընկած էին , թափված էին, նեխում էին, վարսեր կանացի պոկված էին գլխից, արնոտ էին, արնոտ վերմակների տակ չորցած փշրանքներ արնաներկ հացի պղծվել էին, մնացել էին ձեռքների մեջ:

Մեր ողբերգությունն ու ընդհանրապես մարդկային ոռբերգությունն այս քառատողում առանց քերականական դեմքի՝ ստորոգյալի հառնում է մեր աչքերի առաջ, և ակամա բոլորս էլ դառնում ենք այդ դեմքը:

Ես փորձելու եմ տրված օրինակներով սովորողների հետ որոշել միակազմ նախադասությունների տեսակները, նրանցից լսել գոյություն չունեցող անդամի իրենց տարբերակը, և իմ և նրանց տարբերակները համադրվելու են: Պատասխանները, կարծում եմ, ավելի ամբողջական կդարձնեն միակազմ նախադասությունների ընկալումն ու յուրացումը և Չարենց-բանաստեղծի ներաշխարհի ու տաղանդի դրսևորումները

Նյութի յուրացումից հետո, որպես ստուգում , անցկացնում եմ խմբային աշխատանք: Դասարանը բաժանվում է հինգ խմբի, յուրաքանչյուրին տրվում են տարբեր պոմներից հատվածներ, որոնցում պետք է գտնեն միակազմ նախադասությունները, փորձեն նաև դասարանում աշխատածի պես գտնել թաքնված ենթական և ստորոգյալը: Այս աշխատանքի արդյունքում կնշանակվեն և՛ ձևավորող, և՛ միավորային գնահատականներ: Կտրվի նաև տնային առաջադրանքը: Այն լինելու է բազմաշերտ. նվազագույն դրական գնահատականի հավակնություն ունեցողները պետք է տվյալ պոեմից գտնեն ևս մեկ հատված , որը կունենա միակազմ նախադասություն կամ նախադասություններ: Միջին գնահատական ստանալու համար նախադասությունների ընտրության ծավալը պետք է մեծանա, և աշակերտը պետք է կարդա տվյալ պոեմը: Բարձր գնակատականի հավակնորդները պետք է ամբողջ պոեմից առնվազն յոթ-ութ նախադասություն դուրս գրեն, համառոտ ներկայացնեն պոեմը և անենթակա կամ անդեմ նախադասություններում փորձեն դասարանում կատարած աշխատանքի սկզբունքով տեղադրել ենթակայի կամ ստորոգյալի իրենց տարբերակը:

Դասարանում տրվում են հետևյալ հատվածները.

1-ին խումբ

Օ, դու բարբարոս, խելագար, ցավոտ,

Երբեմն իմաստուն, երբեմն՝ գազան,

Աշխարհներ այրող կախարդական խոտ,

Աշխարհներ շինող բախտի գավազան,

Դիվային ոգի՝ ճահիճների մոտ,

Ոչնչի մասին աղոթք սրբազան…

Ու պետք է քայլել ու քայլել համառ՝

Ապրելու հսկա տենչը բեռ արած,

Քայլել անիմաստ մի կյանքի համար,

Մարել ու վառել աստղերը մարած,

Որ տիեզերքի զառանցանքը մառ

Չցնդի երբեք ու մնա երազ… ‹‹Դանթեական առասպել››

Այս վերջին հատվածը տրամադրելիս սովորողների ուշադրությունը պիտի ուղղեմ նրան, որ համառ, չմեռած, հերևաբար, ավելի ուժեղ Չաարենցը գալիս է կյանքը լավով իմաստավորելու և դրանով կյանքի շարունակականությունը պահելու մտքին։

2 -րդ խումբ

Ու շուրջս խավար է։

Ու շուրջս մշուշ է

Ու մահ։

Գիշեր է, ու վարը

Հիմա

Խարխուլ, խուլ ծփում է

Խոնավ խորխորատը հնի։ ‹‹Հատված››

Այս անենթակա նախադասությունների համար ես ունեմ իմ ենթակաները. Իմ շուրջը խավար է /միտքը, գործը, միջավայրը/, իմ շուրջը մշուշ է

/իրականությունը, այսօր, վաղը/, ու մահ / կյանքը/, գիշեր է /ցերեկը, հայացքը, քաղաքը/:

3-րդ խումբ

Աշխարհը-

Քաղաքները բոլոր,

Ճամփաները, փոշոտ խճուղին,

Վերջին արտաքնոցը քարե-

Ու բոլոր բերքերը հողի:

Ինպիսի բազմալար երգեր,

Ու հրաշք,

Հեքիաթ,

Հիացմունք:

Ողջույն, բյուրհանճար ընկեր,

Հանքագործ

Հանքափոր,

Հացթուխ: ‹‹Ամենապոեմ››

4-րդ խումբ

Տասնհինգ թվի վերջերին…

Կամավոր:

Հայկական բանակ:

Հրացան: Թնդանոթ: Ռումբեր,

Եվ ահա Այգեստանը Վանա:

Եվ ահա- Վարդան, Ռուբեն,

Մահ:

Մահ:

Ընդհանուր, հանուր

Զինվորի, աղջկա, հարսի… «Չարենց Նամե»

5-րդ խումբ

Դրոն:

Դժվար է կռվել հետը:

Եվ այս մարդը.

Խմբապետ Շավարշը: - Մի հաղթ տղամարդ,

Երեսին վերից վար դաշույնի հարված…

Այդ հարվածն ու բեղերը- դեղին ոլորած,

Երկու խուրձ հրեղեն, երկու առու…

Եվ մռայլ աչքերը՝ բիբերում արյուն,

Եվ խիտ հոնքերի գերանդին…

Տնային առաջադրանքի ստուգումից հետո, երբ քերականական նյութը համարում եմ ավարտած, անպայման պիտի խոսեմ Չարենցի անցած ճանապարհի, նրա ոգորումների, հոգևոր երկատման , մասնատման մասին, և, իհարկե, խոսքս կհամեմեմ դարձյալ նրա պոեմներից միակազմ նա;խադասությունների մեջբերումներով, որովհետև, իմ խորին համոզմամբ, մեր լեզվի ուսուցումը պիտի նպաստի գրականության ուսուցմանը, իսկ գրականության ուսուցումը՝ լեզվի: Մեջբերվող միակազմ նախադասությունները հընթացս կգրառվեն սովորողների աշխատանքային տետրերում:

Ուրեմն, 1916թ, գրած «Աթիլլա» պոեմում արդեն երևում է քրիստոնեական խեղճությունից և դեպի անկում տանող անճարակությունից հիասթափված բանաստեղծի պոռթկումը, և հոների առաջնորդ աշխարհակործան Աթիլլին դարձնելով իր գաղափարի կրող /Վահագնից երևի հույսը կտրել էր/՝ Չարենցը պոռթկում է և նույնիսկ որոշ դեպքերում կործանարար ուժը, ամեն ինչ ոչնչացնող դժոխային ոգին դարձնում ցանկալի, որպեսզի հայից խեղճությունը հեռանա:

Մի քանի որակումներ, և անվանական անդեմ նախադասության ասելիքը հիմնավորված է.

Ես- հազարանուն՝ Մահ. Ավերք և Նեռ,,,

Ես- արքս, աստված, տենդ, դժոխք ու մահ,

Ես- ճշմարտության խարազանը մերկ։ <<Աթիլլա>>

Բնականաբար, Աթիլլը Չարենցի իդեալը չէր, բայց 19-ամյա բանաստեղծին, որ շատ բան էր տեսել և շուտ հասունացել, ապավինել խղճին, ճշմարտության ուժին, ստրկությանը, արդեն խորթ էր, քանի որ նա հասկացել էր ուժի ու փառքի զորության չափը։ Ճիշտ է , նա փառաբանում է ամենակործան ուժը, բայց ազգային հոգեկերտվածքով բարբարոս չէ. նրա մեջ տեղի ունեցող բախումները, ինքնաժխտումը, թվացյալ քամահրոտ հանդգնությունը լոկ արդյունք են ժամանակի, երկնային ու երկրային անարդարության դեմ ըմբոստության։

Վերը նշված ամենակործան ըմբոստությունը կտեսնենք նաև հեղափոխական տարերքի մեջ մտած հրաշունչ մարտիկի «Սոմա» և «Ամբոծները խելագարված» պոեմներում, իսկ մինչ այդ անդարադառնանք որոնումների ակունքին, ողբերգության սկզբին և ինքնազոհության դրդապատճառին՝ ազգային երազին։

«Ազգային երազ» պոեմը սկսել է գրել 1917թ. Էրզրումում և ավարտել 1918թ. Թիֆլիսում։ Ազգային անբացատրելի ցավի պատճառով վերնագրի տակ գրում է «Պոեմ երգիծական և ողբերգական»։ Սա յուրատեսակ «սրտի հիվանդություն է և ուղեղային մորմոք»։

Եթե այստեղ կա ծաղր, դա ժողովրդի անմիաբանությունն է /ցավոք, շատ արդիական/ և անվճռականությունը։ Կտրվելով իրական կյանքից՝ բանաստեղծի հոգին վերևից նայում է խավարի մեջ թաղված հայրենիքին.

Ու մութ էր շուրջս, մի մթին գիշեր։

Խավար էր միայն, մառախուղ ու մութ։

Ու լուռ էր այնպես. ձայն, շշուկ չկար։

Բանաստեղծական հանճարը կարողացել է բաղաձայնույթի կշիռը տալ, որը խորացնում է խոհը, պատկերը դարձնում ավելի ազդու։ Մութը, մահը, խավարը, գիշերը, մշուշը կարծես դառնում են բանաստեղծի մտքի հենքը, ժամանակը խորհրդանշող քաղաքական ու մտավոր հողը։ Չարենցի ահազանգն է՝ խոսքով ու միայն երազելով ապրելու ժամանակը չէ.

Ճառերը հետո, խոսքերը հետո. . . .

Կրակ է այնտեղ, ու հրդեհ, ու մահ

Հայոց աշխարհում հրդեհ է հիմա. . .

Հարկավոր է միավորել ազգին, ունենալ հզոր բանակ և գործել, գործել խավարը ցրելու համար: Մոմը այս պոեմում ներկայացված է բրդե ներքնակի տեսքով , որը, ճիշտ է, փոքր, բայց իրական քայլն է, փրկողը՝ բանակը: Հերիք է մի զանգ, կոչնակ, անձնազոհ մի անհատ, սթափեցնող մի ձայն, և.

Կհիշեն իսկույն ուխտը սրբազան

Ու եզերքներից, կողմերից հեռվի

Դուրս կգան նորից ահեղ մի կռվի:

Իրար հակադրելով երազն ու իրականությունը՝ վերամբարձ հռետորաբանությունն ու գործնական անգամ փոքր թվացող քայլերը՝ Չարենցը իրավիճակի ու պատկերի ընտրությունը թողնում մեզ. որն ենք ուզում.

Ձյուն, բուք էր դաշտում:

Գիշեր ու քամի:

Մահ է այստեղ:

Գիշեր է դուրսը, մի մահու թախիծ:

Գիշեր է դուրսը, ու ձմեռ է ցուրտ. . . .

Թե

Ու լույս էր շուրջս, հրաշք էր կարծես. . . .

Չարենցը պայքարող էր ու վարակել գիտեր, նրա համար ամեն անհնարին դառնում է հնարավոր, նրա խոսքի ու գործի միջև հակասություն չկար. եթե մեռնել, ապա կախաղանին մոտեցող առաջինն ու վերջինը պատրաստ էր լինելու ինքը: Եվ պատահական չէ, որ պարաններից կախված ճոճվող մատաղացուներից ամենասկզբունքայինն էր ու դեմքը չաղավաղածը: «Ամբոխները խելագարված» պոեմում հավաքական ուժի հախուռն զորության կրող մի մասնիկ ենք նաև մենք, և նշված հատվածի անենթակա նախադասությունների ենթական կարծես դառնում է մեզնից յուրաքանչյուրը.

Պիտի երթան առաջ հիմա, պիտի առնեն քաղաքը մեծ

Պիտի թափեն նրա վրա հազարամյա մաղձը իրենց։

Քանդեն պիտի ու ավերեն, տեղը փոշի պիտի փռեն-

Հազարամյա քաղաքը արդ քանդեն պիտի ու ավերեն։

«Ամենապոեմ»-ում Հայաստանի քաղաքական բախտի երեք կարևոր շրջան ապրած բանաստեղծը բաղձում է իր՝ այդ կյանքերին մասնակցի, ակտիվ ու նվիրական մարդու կողմից անցած ու ներկա օրերի գնահատականը տալ։ Այդ երեք շրջանները Մեծ եղեռնի և դրան հաջորդած տարիներն էին, Հայաստանի առաջին Հանրապետությունը և սոցիալիզմ կերտող երկիրը։

Անցյալի մասին խոսելիս գույներն անորոշ են, մշուշոտ, փոշոտ, իսկ դրա կերպավորողները՝ խանութպան Համոն և կորուսյալ հայրենիքի վիլայեթների վրա ողբացող Սողոն, ապագա չունեն. նրանց գնացքն անցել է։ Եկել է ժամը այլ փոշու, այլ քրտինքի ու հարվածի։ Եկել է բանվոր Պողոսի ժամանակը , և բանաստեղծի մոտ համարյա ամեն տողը, ամեն բառը դառնում է կարծես մուրճի մի հատված և փշրում այն մնացորդները, որ խանգարում են նորին։

Հատկապես Երևանի նկարագիրը մեկական բառ-տողով ստեղծում է մի մթնոլորտ, ուր դարերի երազ Նաիրին Պողոսի և նրա նմանների միջոցով կապվում է աշխարհին, դառնում նրա քաղաքներից անբաժան մեկը և քայլում աշխարհի հետ.

Աշխարհը-

Քաղաքները բոլոր,

Ճամփաները, փոշոտ ծաղուղին,

Վերջին արտաքնոցը քարե-

Ու բոլոր բերքերը հողի։

Ինչպիսի բազմալար երգեր,

Ու հրաշք,

Հեքիաթ,

Հիացմունք։

Ողջույն, բյուրանճա՛ր ընկեր,-

Հանքագո՛րծ,

Հանքափո՛ր

Հացթո՛ւխ։

Իսկ դեռևս 1914թ, Երևանն ավելի ընդգծված և Չարենցի հեգնախառն խղճահարությունն ավելի հստակ են երևում այս դրվագում.

Երևան

Աստաֆյան փողոց։

Քնաթաթախ։

Աչքերին փոշի։

Խաղաղ-խաղաղ քաղաք։

Ու զռռոցը- Ա՛-ի, ա՛ի, ա՛-ի-

Իշու։

Էշան,

Էշի...

Բայց Չարենցի համար այդ օրերին անդրադարձը ուներ նպատակ. նա հետո՝ «Վերջաբան»-ում, պիտի համոզվեր ու համոզեր, որ կյանքը փոխվել է, և նորը՝ լի աղմուկով, երկաթով, պուրպուրով, կրակ օրերով, ժողովրդի համար, Նաիրիի համար նոր դուռ է բացում դեպի անծիր եզերքներ։ Զոհաբերումը, թերևս, արդարացված է. Նաիրին իր կյանքն է կռում։ Բայց բանաստեղծի մեջ կարծես դարավոր փորձանքներից հավերժ խաբվածի զգուշավոր ու կասկածոտ գենն է խոսում, կամ էլ նա փորձում է զգալ, մարգարեաբար կանխազգալ իր և իր երկրի ոչ հեռու ապագան.

Թե խաբեն օրերն այս հրկեզ՝

Սրտով միշտ քեզ պե՛ս ու քեզ հե՛տ-

Ես էլի քո փառքը կերգեմ-

Ես – չնչին,

Վերջին

Պոետ...

Հանճարեղորեն արդիական, և՛ ցավալի, և՛ իրական։

Անձնազոհ բանաստեղծն իրենով ճանապարհ էր բացում սերունդների համար. սա էր նրա բոլոր ապրումների ու պայքարների իմաստը, ոչինչ, որ իր մահից հետո «Իշաբար շարեն՝ Ողորմի»։

1928թ. գրած «Խմբապետ Շավարշը» պոեմում կերտելով խմբապետի՝ տագնապների ու անորոշության մեջ թափառող կերպարը՝ նա մտքի պայծառությամբ տեսնում էր այն միջավայրը, մթնոլորտը և ապրումները, որ սպասում էին իրեն ապագայում, նրա սրատես աչքն արդեն որսացել էր ստալինյան «խրախճանքի» նախապատրաստությունը։ Անդրադարձը Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական և բարոյահոգեբանական խիստ ծանր մթնոլորտին կարծես փնտրտուքի , գայթելու, ինչ-որ կորցրած բան գտնելու և սխալն ուղղելու անձնական որոնումն էր։ Մահվան աչքերին բազմիցս նայած և կյանքը ազգի զոհասեղանին դրած խմբապետ Շավարշը տգնապի մեջ էր. Դրոն կանչել է իր մոտ.

Դրոն։

Դժվար է կռվել հետը։

Եվ այս մարդը.

Խմբապետ Շավարշը։ - Մի հաղթ տղամարդ,

Երեսին վերից վար դաշույնի հարված...

Այդ հարվածն ու բեղերը։ - Դեղին, ոլորած,

Եպկու խուրձ հրեղեն, երկու առու...

Եվ մռայլ աչքերը՝ բիբերում արյուն

Եվ խիստ հոնքերի գերանդին...

Այս քայլող առասպելը, փորձելով գինու մեջ խեղդել հիշողությունները, մեր առջև հարբածի անկեղծությամբ բացում է այն տարաձայնություններն ու քաղաքական սխալները, որ թույլ էին տվել իրենք։ Ճակատագիրը նրանց ամենառողբերգական պահին էր ծնել, ծնել էր, որ տեսնեն, թե ինչպես.

Խնուսից – Ալաշկերտ։ Հետո Կարս։

Ցուրտ, մերկ, սով, տիֆ։

Ինչքան, իինչքան մեռան

Քաղցից, կամ ետ չեկան ֆրոնտից։

Ամբողջ ճանապարհը – դիակներ, մահ։

Շավարշի մեջ կարծես այլևս մեռել էր մարդը, մեռել էր մարդը շատերի մեջ, որովհետև գաղթական, սովյալ ու Շավարշի փսղուքը ագահորեն լափող ուռած փորերով երեխաների «Աչքերում պսպղում էր քաղցը՝ անասնական, անեզրական, անեզր...»

Պատմությունը, ցավոք, կրկնվելու հատկություն ունի. տարիներ անց հայրենիքի բախտով ապրող, պայքարող ու զոհաբերվող Չարենցին պիտի պարուրեին ավելի դաժան ու դառը մտքեր իր արածը գնահատելիս, և ողբերգականորեն անարդար օրերում պիտի հնչեր նրա՝ մահից էլ չարագույժ խոստովանությունը. «Չկա ավելի ամեհի պատիժ, քան այն, երբ մարդուն դատապարտում են իբրև դավաճանողի մի գաղափարի դեմ, որը հենց նրա սրբազան և միակ – նրա կյանքի միակ իմաստը կազմող գաղափարն ու գործն է։ Եվ չկա մի միջոց ցույց տալու, համոզելու, որ այդպես չէ, որ հենց նույն մեղքի օբյեկտն է իր միակ սրբությունը....»։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով նյութը՝ պետք է խոստովանել, որ Չարենց բանաստեղծն այնքան հզոր է, այնքան ընդգրկուն, որ մի փոքր անգամ անդրադարձը շեղում է քերականական նյութից։

Ինչևէ, հնարավորինս փորձ է արվել մի քանի պոեմներից դուրս գրել միակազմ նախադասություններ, օրինակներով նշել դրանց տեսակները և որոշ բացահայտումներ անել։ Կաային մեջբերված շատ օրինակներ, որոնց քերականական վերլուծությանը որևէ անդրադարձ չի կատարվել նյոթի՝ գրականագիտական վերլուծության պարտադիր և ցանկալի մոտեցումից և ծավալի սահմանափակումից ելնելով։ Կարծում եմ, որ քերականական աշխատանքը ավելի մեծ ու խորը դարձնելու համար նպատակահարմար է վերցնել երկու- երեք պոեմ և աշխատել։ Այդ հնարավորությունը տրվում է սովորողներին, որոնցից հետաքրքրվածները կարող են որպես նախագծային աշխատանք ավելի համակողմանի ուսումնասիրել այն։

Վերջում մնում է միայն ասել, որ ինչ էլ ասվի, գրվի, ուսումնասիրվի, միևնույն է , Չարենցի անհատակ խորությունը դեռ շատ սերունդների պիտի ձգի իր խորքերը և հիացնի այնտեղ թաքնված գանձերով ու առեղծվածներով։

Օգտագործված գրականության ցանկ

1. Եղիշե Չարենց - «Ընտիր երկեր» Ա հատոր

2. Սերգեյ Աբրահամյան - «Հայոց լեզու» / շարահյուսություն/

3. Սերգեյ Աբրահամյան, Վարագ Առաքելյան, Վ. Քոսյան - «Հայոց լեզու» / 2-րդ մաս, շարհյուսություն/

4. Դավիթ Գասպարյան - « Ողբերգական Չարենցը»